ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 մարտի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

37
(3246)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանի հայտարարագրերը, վերլուծել է ներկայացված տվյալները եւ առանձնացրել հիմնական փաստերը:

Նշենք, որ Էդուարդ Հակոբյանը ՊԵԿ նախագահի պաշտոնը ստանձնել է 2024 թվականի նոյեմբերի 28-ին: Մինչ այդ՝ 2022 թվականի դեկտեմբերի 29-ից զբաղեցրել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնը: ArmLur.am-ը պարզեց, որ 2024 թվականի հայտարարագրի համաձայն՝ Հակոբյանը ունի 2 միավոր անշարժ գույք՝ Երեւանում գտնվող բնակարան եւ ավտոկայանատեղի, որոնք ձեռք են բերվել 2020 թվականի հուլիսի 28-ին՝ համատեղ սեփականությամբ: Նա նաեւ ունի 2018 թվականի արտադրության MAZDA մակնիշի ավտոմեքենա որպես 90 եւ ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոց:

Հայտարարագրից պարզ է դառնում, որ նա փոխառություններ է տրամադրել «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին՝ 16 մլն 560 հազար դրամ, ինչպես նաեւ ունեցել է վերադարձված փոխառություն՝ 4 մլն 341 հազար 643 դրամի չափով:

Բանկային հաշիվներում Հակոբյանը ունեցել է 2 մլն 455 հազար 979 դրամ եւ 5 մլն 266 հազար 666 դրամ, իսկ կանխիկ միջոցները կազմել են 4 մլն դրամ: Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2024 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է 23 մլն 361 հազար 229 դրամ: Դրանից 3 մլն 997 հազար դրամը եկամտային հարկի վերադարձ է, 3 մլն 353 հազար դրամը՝ աշխատավարձ ՊԵԿ-ից, իսկ 15 մլն 915 հազար դրամը՝ ֆինանսների նախարարությունից ստացած աշխատավարձ: Նա նաեւ ստացել է ապահովագրական հատուցում «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ից: Միեւնույն ժամանակ, Հակոբյանի վարկային պարտավորությունները տարեվերջին կազմել են 40 մլն 149 հազար դրամ, իսկ միայն վարկի մարման ուղղությամբ վճարել է 5 մլն 449 հազար դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Թեեւ համապետական ընտրությունների պաշտոնական նախընտրական քարոզարշավը մեկնարկելու է մայիսի 8-ից եւ կտեւի մինչեւ հունիսի 5-ը, այնուամենայնիվ, քաղաքական գործընթացները փաստացի արդեն ակտիվ փուլում են: Վերջին օրերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հանդիպումներ են անցկացնում քաղաքացիների հետ Երեւանի տարբեր հատվածներում՝ նախարարների եւ այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Հանդիպումների ընթացքում բարձրաձայնվում են քաղաքացիների խնդիրներ, տրվում են հանձնարարականներ, քննարկվում հնարավոր լուծումներ, ինչը հանրային ընկալմամբ ստեղծում է վաղ մեկնարկած քարոզչության տպավորություն: Առաջանում է հարց՝ արդյոք նման ակտիվությունը կարող է դիտարկվել որպես նախընտրական քարոզչություն կամ վարչական ռեսուրսի կիրառում, հատկապես այն պարագայում, երբ գործընթացում ներգրավված են պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել ՀՀ պաշտոնյաների գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագրերը: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի 2024 թվականի հայտարարագիրը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ: Նշենք, որ Գարեգին Խաչատրյանը տվյալ պաշտոնին նշանակվել է 2022 թվականի հոկտեմբերի 5-ին: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Խաչատրյանը իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2005 թվականին Երեւանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանության եւ շահագործման» ՓԲԸ-ում՝ ինժեներ-մասնագետից: Այնուհետեւ աշխատել է աշխատակազմում՝ որպես գործավար, ապա անցել է անշարժ գույքի կառավարման համակարգ, որտեղ զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ մասնագետից մինչեւ բաժնի պետ: 2014 թվականին դարձել է շենքերի եւ շինությունների հաշվառման բաժնի պետ, 2019-ին՝ արտաքին ձեւավորման եւ գովազդի վարչության պետ, 2020-ին՝ անշարժ գույքի կառավարման վարչության պետ: 2022 թվականի հոկտեմբերի 5-ին նշանակվել է տեսչական մարմնի ղեկավար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են հարկային քաղաքականության ընթացակարգային բարեփոխումներին ուղղված աշխատանքները:Վարչապետ Փաշինյանը նշել է, որ այս խորհրդակցությունը տեղի է ունենում ի շարունակություն Կառավարության նիստում վերջերս տեղի ունեցած քննարկման, որը վերաբերում էր հարկերից խուսափելու հանցավոր համարվող արարքների դեպքում քրեական պատասխանատվության չափային շեմերի վերանայմանը: Քննարկման արդյունքում արձանագրվել էր, որ կա նախագծերով առաջարկվող փոփոխությունների լավարկման անհրաժեշտություն, եւ վարչապետը հանձնարարել էր աշխատանքներ իրականացնել այս ուղղությամբ: Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանը զեկուցել է իրականացված վերլուծությունների մասին եւ մանրամասներ ներկայացրել առաջարկվող նոր ընթացակարգերի, հարկային ոլորտի զարգացման եւ վարչարարության բարելավմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ օրինապահ հարկ վճարողի ինստիտուտի վերափոխմանն ուղղված աշխատանքներին: Վարչապետը կարեւորել է հարկային քաղաքականության հետեւողական բարելավումն ու լավարկումը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՅՈՒՅԻՉ

ArmLur.am-ը զրուցել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Տիգրան Պարսիլյանի հետ:

-Պարոն Պարսիլյան, ՔՊ-ն Սահմանադրական դատարանի դատավոր ընտրեց ՔՊ խմբակցության նախկին անդամ Վլադիմիր Վարդանյանին: Ինչպե՞ս է Վլադիմիր Վարդանյանն ապահովելու անկախ, անաչառ դատական համակարգ, երբ նախկինում աշխատել է իշխանության հետ եւ եղել է այդ համակարգի մաս:

-Հանրության համար պետք է հասկանալի լինի, որ պաշտոնի անցնելը ենթադրում է նոր պարտավորություններ եւ պատասխանատվություն:

Զարգացած երկրների օրինակով էլ կարող ենք տեսնել, որ նախկինում պետական կամ քաղաքական համակարգում աշխատած անձանց նշանակումը չի նշանակում, թե տվյալ երկրի դատական համակարգը չի կարող լինել արդար ու անկախ: Օրինակ՝ դժվար է պատկերացնել, որ հանրությունը կարծում է, թե Գերմանիայում արդար Սահմանադրական դատարան գոյություն չունի:

Շատ կարեւոր է նաեւ երդման ինստիտուտը, ինչի վրա պարոն Վարդանյանն էլ շեշտադրում արեց: Ցանկացած մարդ մինչեւ որեւէ պաշտոն ստանձնելը կարող է ունենալ իր քաղաքական հայացքները, սակայն դա ինքնին չի նշանակում, որ նա չի կարող գործել օրենքի եւ պաշտոնի պահանջներին համապատասխան: Նախապես պնդել, թե նա չի կարող պահպանել անաչառությունը, առնվազն անմեղության կանխավարկածի խախտում է:

-Ինչպե՞ս եք գնահատում վարչապետ Նիկոլ Փաշինյանի պահվածքը, երբ նա երբեմն քաղաքացիների հետ խոսում է ջղայնացած, բարկացած տոնով կամ մատ թափ տալով:

-Այսօրվա կոնկրետ հայտարարությունը չեմ լսել, սակայն նախկին միջադեպի վերաբերյալ կարող եմ ասել, որ դա ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարությունն այնպիսի մակարդակի է հասել, որ քաղաքացին կարող է բացահայտ եւ նույնիսկ կոշտ քննադատություն հնչեցնել վարչապետի հասցեին:

Վարչապետը նույնպես մարդ է եւ կարող է էմոցիոնալ արձագանքել: Կարեւորն այն է, որ նման իրավիճակներից հետո նա ներողություն է խնդրել, ինչը քաղաքական պատասխանատվության դրսեւորում է:

Միեւնույն ժամանակ, եթե համեմատենք նախկին իշխանությունների ժամանակների հետ, շատերը հիշում են վախի մթնոլորտը, փողոցային բռնությունները եւ ակտիվիստների նկատմամբ ճնշումները: Այդ ֆոնին այսօր նույնիսկ կոշտ, բայց հրապարակային խոսակցությունն ինքնին ժողովրդավար միջավայրի ցուցիչ է:

-Եթե նախկին նախագահներից որեւէ մեկը Ձեր ընտանիքի ներկայությամբ իրեն այդպես պահեր, իսկ հետո ներողություն խնդրեր, արդյո՞ք դա Ձեզ համար ընդունելի կլիներ:

-Եթե խոսքը վերաբերում է պետական ինստիտուտ ներկայացնող անձին, ապա բնականաբար, նրա խոսքն ու վարքագիծը ավելի մեծ նշանակություն ունեն: Բայց եթե նույն չափով կարեւորում ենք ինստիտուտը, ապա նույն կերպ պետք է կարեւորենք նաեւ ներողությունը: Այս դեպքում կարեւոր է, որ սխալ արձագանքից հետո եղավ պատասխանատվություն եւ ներողություն: Դա այն տարբերությունն է, որը շատերը նշում են՝ համեմատելով նախկին ղեկավարների հետ, որոնց կողմից հասարակությունը հաճախ նման պատասխանատվության դրսեւորում չի տեսել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՊ ՅՈՒՅԱԿԻ 50-ՅԱԿԸ

Մարտի 27-28-ին տեղի ունեցավ ՔՊ կուսակցական ներքին ընտրությունը, որի արդյունքներով Նիկոլ Փաշինյանը վարչապետի թեկնածու է ընտրվել: Ձայների թվով նրան հաջորդում են Արարատ Միրզոյանն ու Սուրեն Պապիկյանը:

ArmLur.am-ը ներկայացնում է քվեարկության նախնական արդյունքները՝ ըստ հավաքած ձայների:

1. Փաշինյան Նիկոլ Վովայի - 933
2. Միրզոյան Արարատ Սամվելի - 853
3. Պապիկյան Սուրեն Ռաֆիկի - 842
4. Պապոյան Գեւորգ Հարությունի - 806
5. Ռուբինյան Ռուբեն Կարապետի - 782
6. Ավանեսյան Անահիտ Թորգոմի - 780
7. Ալեքսանյան Վահագն Հովիկի - 777
8. Հարությունյան Արայիկ Էդուարդի - 766
9. Կոնջորյան Հայկ Արսենի - 747
10. Թորոսյան Արսեն Գեւորգի - 745
11. Սիմոնյան Ալեն Ռոբերտի - 717
12. Խուդաթյան Դավիթ Հովհաննեսի - 696
13. Գալյան Սրբուհի Հովհաննեսի - 682
14. Ղազարյան Ալխաս Աղաբեկի - 679
15. Պետրոսյան Ռոմանոս Վանիչկայի - 646
16. Ջուլհակյան Արուսյակ Թովմասի - 642
17. Մակունց Լիլիթ Կամոյի - 622
18. Հակոբյան Հասմիկ Արմենի - 613
19. Խաչատրյան Արմեն Էդմոնդի - 604
20. Մկրտչյան Արեն Միքայելի - 602
21. Հովհաննիսյան Արթուր Ղարիբի - 585
22. Գաբրիելյան Վիլեն Կարենի - 580

23. Մանավազյան Արուսյակ Լեւոնի - 557
24. Եղոյան Արման Աշոտի - 548
25. Սանոսյան Գնել Հենզելի - 542
26. Ղազարյան Սոնա Արայի - 539
27. Միքայելյան Սասուն Մեխակի - 512
28. Գաբրիելյան Սիսակ Արմենի - 509
29. Ավինյան Տիգրան Արմենի - 502
30. Թունյան Բաբկեն Էդիկի - 500
31. Լեւոնյան Լեւոն Գագիկի - 499
32. Բաթոյան Զարուհի Վալերիանի - 498
33. Բաղդասարյան Նազելի Հրաչի - 490
34. Գասպարյան Տաթեւիկ Մաթեւոսի - 483
35. Վարդանյան Արաքսյա Պողոսի - 477
36. Հայրապետյան Մխիթար Իոսիֆի - 458
37. Հարությունյան Քնարիկ Համլետի - 451
38. Գրիգորյան Նարեկ Հարազատի - 443
39. Փամբուխչյան Արմեն Սոկրատի - 441
40. Դավոյան Արփինե Հրահատի - 409
41. Սիմիդյան Հակոբ Կարապետի - 405
42. Սարգսյան Գարիկ Մնացականի - 404
43. Հովհաննիսյան Միլադա Մկրտչի - 390
44. Ղալումյան Վահե Վոլոդյայի - 373
45. Մովսիսյան Սերգեյ Լեւիկի - 367
46. Բաղալյան Լուսինե Խաչիկի - 364
47. Մինասյան Սարիկ Սամվելի - 355
48. Բագրատյան Սերգեյ Պապաշի - 351
49. Ղալումյան Հայկ Վոլոդյայի - 346
50. Հակոբյան Վաղարշակ Սոսի-318

ԼՐԱԳՐՈՂԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանի բաց նամակը՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

«Դուք հայտարարեցիք, որ լրագրողները ձեզ են ընտրելու, հակառակ դեպքում գործազուրկ են դառնալու ու օրվա հացը վաստակեն ֆայլաբազարում: Լրագրողներից մեկին էլ ասացիք. «Դուք հիմա լրագրող եք աշխատում, որովհետեւ ես վարչապետ եմ, երբ չլինեմ, 4 ժամ հետո աշխատանք չեք ունենալու, գալու են ձեր հեռախոսը, ժամացույցն էլ են ձեռքներիցդ հանելու»: Այս խոսքը ինձ չէր ուղղված, բնականաբար, այնպես չի, որ դա ընդունել եմ իմ հասցեին ու վիրավորվել: Բայց հարկ եմ համարում մի քանի բան ձեզ հասցնել: Եթե ձեզ համար լրագրությունը փող աշխատելու համար է եղել, կոնկրետ ինձ համար լրագրությունը փողի մասին չէ, ցանկացած այլ ոլորտում մենք շատ ավելի մեծ գումար կարող էինք վաստակել, քան լրագրության մեջ՝24 ժամ աշխատելով, ընտանիքից, ընկերներից, հարազատներից կտրվելով, անձնական կյանքը մի կողմ թողնելով:

Լրագրությունը սիրո եւ անսահման նվիրվածության մասին է, անձնազոհության:

Իսպանացի մի լավ գրող կա՝ Կամիլո Խոսե Սելա, ասում է՝ «եթե գրողը պատրաստ չի սովից մեռնել, պիտի իր գործը փոխի»: Ես պատրաստ եմ ոչ թե ֆայլաբազարում աշխատել, այլ սովից մեռնել՝ լինելով լրագրության մեջ, որովհետեւ դա ինձ համար երջանկություն է, սիրած աշխատանք ու կենսակերպ, դրանով ո՛չ հաթաթա կարող եք տալ, ո՛չ էլ վախեցնել:

Լրագրությունը ինձնից տարել է շատ թանկարժեք բաներ կյանքում՝ իմ երեխաների մանկությունը, որը չեմ հասցրել վայելել պատշաճ, ծնողական ժողովների գնալն անգամ ինձ համար մեծ ճոխություն է ու անձնական ուրախություն, որովհետեւ կարեւորել ու կարեւորում եմ այդ պահին որեւէ քաղաքացու բողոքը լուսաբանելը, ավելի առաջնային եմ համարում մարդկանց խնդիրների լուծման հետեւից գնալը, քան անձնական քեֆերն ու հարմարավետությունը: Սա ասում եմ, որովհետեւ դուք եւ ձեր թիմակիցները աջուձախ պախարակում եք լրագրողներին, սեւացնում, անվանարկում՝ գետնին հավասարեցնելով էն ահռելի զոհողությունները, որ ունենում են լրագրողները ամեն օր իրենց աշխատանքում՝ ցույցերին իրենց կյանքը վտանգելով, արտակարգ իրավիճակներում աշխատելով, գիշեր-ցերեկ չունենալով:

Եթե չլինեին լրագրողները, դուք իշխանության չէիք գա, սա միշտ հիշեք:

Ես հասկանում եմ ինչի եք ամբողջ թիմով նախաձեռնել այս արշավը լրագրողների դեմ: Որեւէ իշխանություն չի սիրել լրագրողներին ու մեզ պետք չի սիրել: Բայց փորձել մեզ հեղինակազրկել, մեր ձայնը լռեցնել չի հաջողվել որեւէ իշխանության, ձեզ էլ չի հաջողվելու:

Լրագրողները նաեւ նրա համար են, որ իշխանավորներին, որոնք սոսնձվել են աթոռներին ու մոռացել են իրենք ովքեր են, իջեցնեն հողի վրա: Դա օգտակար է նախեւառաջ ձեզ:

Նախկինների ժամանակներից լրագրող՝ Հռիփսիմե Ջեբեջյան

30.03.2026թ.»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՕՐԻՆԱԿԸ

ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Վարդանյանը ֆեյսբուքյան իր էջում լուսանկար է հրապարակել ու գրել. «Ցեխոտ դեմքով կինը Իսպանիայի թագուհին է:

«2024 թվականի նոյեմբերի սկզբին Իսպանիայի թագավոր Ֆելիպե VI-ը եւ թագուհի Լետիսիան հարձակման ենթարկվեցին զայրացած ամբոխի կողմից:

Իսպանիայում տեղի ունեցած աղետալի ջրհեղեղներից հետո (որոնք հարյուրավոր զոհերի պատճառ դարձան), թագավորական զույգը այցելեց ամենաշատ տուժած քաղաքներից մեկը՝ Պայպորտա:

Տեղի բնակիչները, ովքեր ծայրահեղ հուսահատված էին իշխանությունների ուշացած արձագանքից, թագավորական շքախմբին դիմավորեցին «Մարդասպաններ» վանկարկումներով: Ամբոխը սկսեց նրանց վրա ցեխ, քարեր եւ տարբեր առարկաներ նետել: Թագավորի եւ թագուհու դեմքերն ու հագուստը պատվեցին ցեխով:

Թագավորի թիկնապահները փորձում էին հովանոցներով պաշտպանել նրան, սակայն Ֆելիպե VI-ը հրաժարվեց հեռանալ եւ մոտ մեկ ժամ մնաց ամբոխի մեջ՝ փորձելով լսել մարդկանց ու հանդարտեցնել նրանց: Սա կանխեց իրավիճակի հետագա սրումը հենց տեղում:

Ուշադրություն՝ թագավորի թիկնազորից որեւէ մեկը որեւէ քաղաքացու չհարվածեց:

Միջադեպից օրեր անց Իսպանիայի քաղաքացիական գվարդիան ձերբակալեց երեք տեղացի բնակիչների: Նրանց մեղադրանք առաջադրվեց թագավորական շքախմբի վրա հարձակվելու եւ գույքը (մասնավորապես՝ վարչապետի մեքենան) վնասելու համար:

Ձերբակալվածները ներկայացան դատարան, սակայն շուտով ազատ արձակվեցին՝ ստորագրությամբ (չհեռանալու պայմանով), քանի դեռ հետաքննությունը շարունակվում է:

Որեւէ մեկը Տերունական աղոթքի պահին գետին չտապալվեց ու ցուցադրաբար բերման չենթարկվեց:

Իսպանիայի օրենսդրությամբ պետության գլխի վրա հարձակումը լուրջ հանցանք է, բայց հաշվի առնելով աղետի հուզական ֆոնը՝ դատարանը դեռեւս վերջնական խիստ դատավճիռներ չի կայացրել:

Որովհետեւ այսպիսի դեպքերում միայն օրենքի տառը չի, որ կարեւոր է: Կարեւոր է այն մթնոլորտը, որ դու ստեղծել ես երկրում, կարեւոր է բարձրաստիճան պաշտոնյայի վարքագիծը, նրա արարքները, կարեւոր է նրա պահվածքը դեպքի պահին:

Այնպես որ, դադարեք ձեզ զոհի տեղ դնել, մեր ժողովրդի բացարձակ մեծամասնությունն ուզում է ձեզ դատարանում տեսնել: Մի մասն էլ, ուղղակի չի կարողանում իր զգացմունքները զսպել, երբ դուք համատարած պղծում եք ամեն ինչ»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆՆ ՈՒ ԿԻՆԸ

«Քաղաքացիական դայմանագիր» կուսակցության ներքին ընտրությունների երկու փուլերն ավարտված եւ ամփոփված են, եւ քվեարկության արդյունքներով երկրորդ տեղում է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը՝ 853 ձայնով:

Այս ֆոնին ArmLur.am-ը ուսումնասիրել է Արարատ Միրզոյանի վերջին տարիների հայտարարագրերը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ:

Նշենք, որ Արարատ Միրզոյանը ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի օգոստոսի 19-ից:

2024 թվական

ArmLur.am-ը պարզեց, որ 2024 թվականի հայտարարագրի համաձայն՝ Միրզոյանը Կոտայքի մարզի Նաիրի համայնքում ունի անհատական բնակելի տուն՝ հողամասով եւ տնտեսական շինություններով, որը ձեռք է բերել 2022 թվականի դեկտեմբերի 23-ին: Բացի այդ, նա Երեւանում ունի բնակարան, որը ձեռք է բերել 2018 թվականին:

Բանկային հաշիվներում առկա է եղել 2 մլն 746 հազար դրամ եւ 22 հազար ԱՄՆ դոլար, իսկ կանխիկ՝ 37 հազար դոլար եւ 2 մլն 750 հազար դրամ:

Հաշվետու տարում նրա եկամուտը կազմել է 24 մլն 771 հազար դրամ, որից 21 մլն 752 հազար դրամը՝ աշխատավարձ ՀՀ ԱԳՆ-ից, իսկ 3 մլն 18 հազար դրամը՝ եկամտային հարկի վերադարձ:

ArmLur.am-ը նաեւ պարզեց, որ տարվա ընթացքում Միրզոյանը զգալի ծախսեր է իրականացրել. միայն անշարժ գույքի վերանորոգման համար ծախսել է 16 մլն 800 հազար դրամ: Բացի այդ, հանգստի, ուսման եւ վարկերի մարման վրա ծախսերը եւս միլիոնավոր դրամներ են կազմել:

Նրա հիփոթեքային պարտավորությունները տարեվերջին կազմել են 26 մլն 643 հազար դրամ:

2023 թվական

ArmLur.am-ի ուսումնասիրությամբ՝ 2023 թվականին Միրզոյանի բանկային հաշիվներում եղել է 3 մլն 500 հազար դրամ եւ 30 հազար դոլար, իսկ կանխիկ՝ 50 հազար դոլար եւ 2 մլն դրամ:

2022 թվական

ArmLur.am-ը պարզեց, որ 2022 թվականին Միրզոյանը ձեռք է բերել Կոտայքի մարզի Նաիրի համայնքում գտնվող առանձնատունը՝ 112 մլն դրամ արժողությամբ:

Նույն տարում նրա բանկային ավանդները կազմել են 70 հազար դոլար, հաշիվներում ունեցել է 1 մլն 900 հազար դրամ եւ 20 հազար դոլար, իսկ կանխիկ՝ 25 հազար դոլար եւ 6 մլն դրամ:

2021 թվական

ArmLur.am-ի տվյալներով՝ 2021 թվականին Միրզոյանը ունեցել է 70 հազար դոլար բանկային ավանդ, 9 մլն 100 հազար դրամ եւ 70 հազար 188 դոլար հաշիվների վրա, ինչպես նաեւ 8 մլն դրամ կանխիկ միջոցներ:

Կնոջ՝ Գոհար Աբաջյանի հայտարարագիրը

ArmLur.am-ը ուսումնասիրել է նաեւ Արարատ Միրզոյանի կնոջ՝ Գոհար Աբաջյանի հայտարարագիրը:

Նա 2024 թվականին ձեռք է բերել 2024 թվականի արտադրության BMW մակնիշի ավտոմեքենա՝ մոտ 39 հազար եվրոյով, իսկ նախկին KIA մեքենան վաճառել է 4 մլն 508 հազար դրամով:

Տարվա ընթացքում նրա եկամուտները կազմել են 46 մլն 301 հազար դրամ: Նա աշխատավարձ է ստացել «ԷնՎիդիա Արմենիա» եւ «Քոգնայզ Էնջինիրինգ» ընկերություններից:

Բանկային միջոցները տարվա ընթացքում նվազել են, իսկ կանխիկ գումարը կազմել է 10 հազար դոլար եւ 340 հազար դրամ:

Միաժամանակ, նա ստացել է 11 մլն դրամ վարկ, իսկ ընդհանուր վարկային պարտավորությունները տարեվերջին հասել են 78 մլն դրամի:

Նշենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ 2025 թվականի հունիսի 4-ին գրել էր, որ Գոհար Աբաջյանը նշանակվել է «Էնթերփրայզ Արմենիա» ներդրումային կենտրոնի ղեկավար:

Այսպիսով, ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արարատ Միրզոյանի ընտանիքը վերջին տարիներին ունեցել է տասնյակ միլիոնավոր դրամների եկամուտներ, ձեռք է բերել 112 մլն դրամ արժողությամբ առանձնատուն, ինչպես նաեւ՝ ընտանիքում իրականացվել է թանկարժեք գնում, մասնավորապես կինը գնել է 39 հազար եվրո արժողությամբ BMW ավտոմեքենա:

Սակայն այստեղ առաջանում են մի շարք հարցադրումներ.

- Ինչպե՞ս են համադրվում այս ծավալի ծախսերը պաշտոնական եկամուտների հետ:

- Ի՞նչ աղբյուրներով են ձեւավորվել խոշոր կանխիկ միջոցները՝ տասնյակ հազարավոր դոլարների չափով:

- Որքանո՞վ են հիմնավորված նման թանկարժեք գնումները՝ թե՛ առանձնատան, թե՛ ավտոմեքենայի դեպքում:

- Ինչպե՞ս է բացատրվում նաեւ մեծածավալ վարկերի, եկամուտների եւ միաժամանակ զգալի ծախսերի համադրությունը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՄԱՆԿԱՏԱՆ ՎՐԱ

Իրանի հյուսիսում գտնվող մանկատան վրա ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից իրականացված հարձակման հետեւանքով զոհվել է առնվազն երկու մարդ, եւս հինգը՝ վիրավորվել, հաղորդում է Fars լրատվական գործակալությունը՝ հղում անելով տեղական իշխանություններին:

«Ամերիկա-սիոնիստական ռեժիմի կողմից նոր բարեգործական համալիրի եւ մանկատան վրա հարձակման հետեւանքով, ցավոք, երկու մարդ զոհվել է, հինգը՝ վիրավորվել»,-ասվում է հայտարարության մեջ:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սենդամթերքի անվտանգության տեսչական մարմնի արագ արձագանքման բաժնի տեսուչների կողմից «Սդ Հոլդինգ» ՍՊ ընկերությանը պատկանող (ք. Երեւան, Սասունցի Դավիթի 7) հանրային սենդի օբյեկտում իրականացված ստուգման ընթացքում արձանագրվել են սենդամթերքի արտադրության հետ անհամատեղելի սանիտարահիգիենիկ խախտումներ:

Մասնավորապես, սենդի կառույցի պատերը եղել են վնասված, չեն ունեցել հարթ մակերես եւ չեն պահվել նորոգ վիճակում, առաստաղներն ապահով եւ նորոգ չեն եղել, առկա են եղել տարբեր մեծության ճաքեր, կառուցված չեն եղել այնպես, որ նվազեցվեն կեղտի կուտակումները եւ մասնիկների թափվելու հնարավորությունը:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հանրային սենդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, տնտեսավարողին հանձնարարվել է այն համապատասխանեցնել սահմանված նորմերին, ամրագրվել է վերջնաժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԱՄՆ–Ն ԿՈՉՆՉԱՑՆԻ

Եթե Իրանը անմիջապես չբացի Հորմուզի նեղուցը, ԱՄՆ-ն կոչնչացնի բոլոր էլեկտրակայանները, նավթահանքերը եւ Խարգ կղզին, գրել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը

«Եթե որեւէ պատճառով համաձայնություն շուտով ձեռք չբերվի, եւ եթե Հորմուզի նեղուցն անհապաղ բաց չլինի բիզնեսի համար, մենք կավարտենք մեր հիասքանչ այցը Իրանում՝ պայթեցնելով եւ ամբողջությամբ ոչնչացնելով նրանց բոլոր էլեկտրակայանները, նավթահորերը եւ Խարգ կղզին, որոնց մենք միտումնավոր դեռ չենք դիպչել»,- նշել է Թրամփը:

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է

Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն է տարածել «ադրբեջանցիների ցեղասպանության օրվա» կապակցությամբ:

Ինչպես հաղորդում է APA գործակալությունը, հայտարարության մեջ խոսվում է «1918 թվականի մարտ-ապրիլյան իրադարձությունների» մասին, որոնք, ըստ հայտարարության հեղինակների, իբր «պատմության մեջ են մտել որպես հազարավոր անմեղ մարդկանց զանգվածային սպանություններ՝ նրանց ազգային եւ կրոնական պատկանելության պատճառով»:

«Միջազգային կազմակերպությունները եւ ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է սկզբունքային դիրքորոշում որդեգրեն հայերի կողմից ադրբեջանցիների դեմ իրականացված էթնիկ զտումների եւ ցեղասպանական հանցագործությունների շարքի վերաբերյալ եւ 1918 թվականի իրադարձությունները ճանաչեն որպես ցեղասպանություն»,-պահանջում է Ադրբեջանի օմբուդսմենը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԷԿՈՊԱՐԵԿՆԵՐԻ ՊԵՏԸ՝ 18.3 ԿԳ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՄԱՄԻՆ

2025 թվականի հոկտեմբերի 24-ին Քննչական կոմիտեն հաղորդել էր, որ հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության՝ մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում հիմնավորվել եւ հաստատվել է, որ մի խումբ անձինք իրացնելու նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու նախնական համաձայնությամբ, 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ապօրինի ձեռք են բերել առանձնապես խոշոր չափերով՝ 18.3 կգ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Այնուհետեւ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության էկոպարեկներ Ա.Մ.-ն եւ Բ.Ա.-ն առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցը վերցնելու նպատակով մեկնել են Սյունիքի մարզ: Թմրամիջոցները վերցնելուց հետո, էկոպարեկները այն տեղադրել են Ա.Մ.-ի մոր անվամբ հաշվառված ավտոմեքենայում եւ, նպատակ ունենալով քողարկել թմրամիջոցը Երեւան քաղաք տեղափոխելու գործընթացը, պատրանք են ստեղծել, իբր ավտոմեքենան խափանված է: Ա.Մ.-ն՝ Բ.Ա.-ի ցուցումով, իր կողմից օգտագործվող հեռախոսահամարով 2025 թվականի սեպտեմբերի 8-ին կապ է հաստատել Սյունիքի մարզի Կապան քաղաքի բնակչի հետ՝ պայմանավորվածություն ձեռք բերելով վարձատրության դիմաց ավտոմեքենան Երեւան քաղաք տեղափոխելու վերաբերյալ: Ավտոմեքենայի՝ Երեւան քաղաք հասնելուց հետո, խմբի անդամ Ա.Մ.-ն մոտեցել է վարորդին, վերցրել թմրամիջոցով բեռնված ավտոմեքենայի բանալին, իջեցրել եւ կայանել, որից հետո ձերբակալվել է ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության աշխատակիցների կողմից: Կատարված խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել է ավտոմեքենայում թաքցված առանձնապես խոշոր չափերով՝ 18.3 կգ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը:

Նախաքննության ընթացքում Ա.Մ.-ի, Բ.Ա.-ի եւ Ա.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը): Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, կիրառվել էր կալանք:

Էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր Կիրակոսյանին հարց ուղղեցինք, թե նա տիրապետում է՝ ինչ է կատարվում իր ղեկավարած կառույցում, արդյոք կատարվածը իր բացթողման եւ համակարգը չտիրապետելու հետեւանք է, որ էկոպարեկները ներգրավված են թմրանյութ իրացնելու գործընթացում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառում են իրականացրել Բյուրեղավանի «Արեւ մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի խոհանոցում եւ պարզել, որ այնտեղ խախտվել են օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ որոշ նորմեր:

Ի մասնավորի՝

- հատակները չեն ունեցել հարթ մակերես, նորոգ չեն եղել, պատրաստված չեն եղել անջրանցիկ, չներծծող, լվացվող նյութերից,
- խոհանոցն ապահովված չի եղել անձնակազմի համար հանդերձարանով:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ մանկապարտեզի խոհանոցի արտադրական գործունեությունը կասեցվել է:

Հայտնաբերված խախտումները վերացնելու համար վերահսկող կառույցը սահմանել է վերջնաժամկետ:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարտի 26-ին Նալբանդյան գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել 34-ամյա մի երիտասարդ, որը հետախուզվում էր երթեւեկության անվտանգության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Տավուշի մարզի գումարտակի պարեկները մարտի 26-ին ծառայություն իրականացնելիս Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղում ստուգման նպատակով կանգնեցրել են «Մերսեդես» մակնիշի մեքենան: Պարզվել է, որ Երեւան քաղաքի բնակիչ 54-ամյա վարորդը ՌԴ իրավապահների կողմից հետախուզվում է գողության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: 54-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Դիլիջանի բաժին:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին:

ԱՎՏՈՎԹԱՐ ԵՐԱՍԽԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մարտի 30-ին՝ ժամը 09:10-ի սահմաններում «Կամազ» մակնիշի բեռնատարը Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի՝ ժողովրդին հայտնի «Երասխի կարցեւոյում»՝ արագաչափի հարեւանությամբ, բախվել է «Nissan Tilda», «Mercedes», «Opel», «Toyota RAV4» մակնիշի ավտոմեքենաներին եւ ավտոքարշակին: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, բախման հետեւանքով «Կամազ»-ը կողաշրջվել է եւ հայտնվել ճանապարհի մեջտեղում: Վթարի հետեւանքով 2 հոգի տեղափոխվել են «Արարատ» բժշկական կենտրոն: Մինչ դեպքի վայր կժամաներ քննչական խումբը, հիվանդանոցից ահազանգ է ստացվում ոստիկանության Արարատի բաժին, որ վիրավորներից մեկը, գիտակցության չգալով, մահացել է: Ֆոտոլրագրողը հայտնում է, որ բացի «Կամազ»-ից, բոլոր ավտոմեքենաները եղել են կայանված, որոնցից մի մասը վերածվել է մետաղե ջարդոնի:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ մահացածն ու վիրավորը հայր ու որդի են, մահացածը որդին է՝ 20 տարեկան: Տեղեկացանք նաեւ, որ վթարված մեքենաների մեջ կա նաեւ ԱԱԾ մեքենա: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, բախման հետեւանքով «Կամազ»-ը կողաշրջվել է եւ հայտնվել ճանապարհի մեջտեղում:

Դեպքի փաստով Վեդիի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են ավտոմեքենաների սեփականատերերի, վարորդների վիրավորի եւ մահացածի ինքնությունը:

ԱՀԱՋԱՆԳ

Փաստաբան Ռոման Երիցյանը գրում է. «Տաքսու արցախցի վարորդներից մեկը քիչ առաջ ահազանգել է՝ տեղեկացնելով, որ ծառայության մատուցման ընթացքում հաճախորդներից մեկը վիրավորական եւ անպարկեշտ արտահայտություններ է հնչեցրել Արցախի նախագահի եւ Արմինե Մոսիյանի հասցեին: Ի պատասխան վարորդը նշել է, որ նման խոսքերի հասցեատերը պետք է լինի Նիկոլ Փաշինյանը, այլ ոչ Սամվել Շահրամանյանը կամ Արմինե Մոսիյանը: Ջրուցակիցն իր հերթին հայտարարել է, որ հանդիսանում է ազգային անվտանգության ծառայող եւ հավելել, որ Փաշինյանի հասցեին հնչեցված խոսքերի համար վերջինս շուտով կփոշմանի:

Սպասենք ոստիկանության կամ քննչականի կանչին»:

ՄԻՊ

ՏԵՍԱԿՑԵԼ ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ մարտի 30-ին պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել ՆԳՆ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր՝ մարտի 29-ին Երեւանի Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպից հետո ձերբակալված անձանց տեսակցելու նպատակով:

Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույց են ունեցել ձերբակալված անձանց հետ, ուսումնասիրել նրանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը: Արդյունքները կամփոփվեն եւ պաշտպանի իրավասության շրջանակում կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ անձանց իրավունքները երաշխավորելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, ներառյալ՝ իշխանությունների գործունեության վերաբերյալ քննադատական դիրքորոշում ներկայացնելու իրավունքը: Միեւնույն ժամանակ, որեւէ իրավունքի իրացում չպետք է ուղեկցվի այլ անձանց, այդ թվում՝ պաշտոնատար անձանց նկատմամբ բռնությամբ, բռնության կոչերով, ատելության խոսքի դրսեւորումներով եւ այլն:

Պաշտպանը կարեւորում է դեպքի բոլոր հանգամանքների անկախ, բազմակողմանի եւ օբյեկտիվ ուսումնասիրությունը: Միեւնույն ժամանակ, պաշտպանը պահանջում է իրավասու մարմիններից ցանկացած գործողություն իրականացնելիս պահպանել իրավաչափության սկզբունքը, զերծ մնալ անհամաչափ ուժի կիրառումից, երաշխավորել քաղաքացիների բոլոր իրավունքների պատշաճ իրացումն ու պաշտպանությունը: Այս առումով պաշտպանը շարունակելու է հետեւել իրավիճակին՝ քաղաքացիների իրավունքները երաշխավորելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է արձանագրել նաեւ հանրային խոսույթում ատելության եւ անհանդուրժողականության դրսեւորումների տարածման մտահոգիչ միտումը: Այս համատեքստում պաշտպանը կոչ է անում զերծ մնալ իրավիճակը սրող, ատելություն կամ բռնություն հրահրող արտահայտություններից՝ հաշվի առնելով դրանց վտանգավոր ազդեցությունը հասարակական համերաշխության վրա:

Հայաստանում ատելության խոսքն ունի մտահոգիչ ծավալներ եւ օգտագործվում է գրեթե ամենօրյա ռեժիմով: Սա չափազանց վտանգավոր միտում է, որը կարող է հանգեցնել խորքային բացասական հետեւանքների: Ուստի՝ անհրաժեշտ է համատեղ եւ հետեւողական ջանքերով պայքարել նշված երեւույթի դեմ:

● *Մարտի 26-ից 27-ը ՀՀ-ում բացահայտվել է 129 հանցագործություն, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՍԱՀՄԱՆԱԳՈՏՈՒՄ

Հայաստանում ԵՎրոպականՄիության առաքելությունն է՝ դիտարկելու եւ զեկուցելու հայ-ադրբեջանական սահմանի անվտանգության իրավիճակի մասին, նպաստելու մարդկանց անվտանգությանը, որպեսզի բնակչությունը ավելի ապահով զգա, հատկապես եթե նրանք ապրում են սահմանի մոտ, աջակցելու հակամարտության գոտում ժողովուրդների միջեւ վստահության ամրապնդմանը: Հայաստանում Եվրոպական Միության առաքելության կողմից բնակչության մեջ տարածած թերթիկներում նշված է, որ իրենց ներկայության շնորհիվ սահմանին միջադեպերի թիվը նվազել է, իրենց զեկույցները ուղարկվում են Եվրամիություն՝ անդամ երկրներին լիարժեք տեղեկացված պահելու համար: Հայաստանում գլխամասային գրասենյակը Եղեգնաձոր քաղաքում է, կապի գրասենյակը՝Երեւանում, օպերատիվ գրասենյակներ են գործում Մարտունիում, Եղեգնաձորում,Ջերմուկում, Գորիսում, Կապանում, Իջեւանում: Եվրոպական Միության անդամները, բացի սահմանագատու դիտարկումներից, շփվում են սահմանագոտու բնակիչների հետ: Դրան խոչընդոտում է այն, որ այդ առաքելության շրջիկ 2 հոգանոց խմբերի անդամները առանց թարգմանիչների են, նրանք անգլերենի, եվրոպական այլ լեզուների են տիրապետում, իսկ սահմանագոտու բնակիչները քիչ, թե շատ ռուսերեն գիտեն, նրանցից քչերն են անգլերենին բավարար տիրապետում:

ԲԱՋՄԱԹԻՎ ՋՐԱՓՈՍԵՐ

Դիլիջանի կենտրոնական մասում՝ հանրահայտ «Միմինո» արձանախմբի հետեւի մասում, կենտրոնից դեպի Դիլիջանի քաղաքային զբոսայգի, Դիլիջանի միջազգային դպրոց տանող փողոցի սկզբամասում բազում, խոր լճակներ են: Ամեն անգամ անձրեւներից հետո այստեղ լճակներ են գոյանում, որոնք ավտոմեքենաները դժվարությամբ են հաղթահարում: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանն իր պաշտոնավարման 5 տարիներին չի նորոգել տուրիստական Դիլիջանի կենտրոնական այդ փողոցը: Դիլիջան քաղաքի բնակչուհի, հասարակական ակտիվիստ Լուսինե Գրիգորյանը քաղաքի կենտրոնի այդ ջրափոսերի մասին ասում է. «Երկրում, որտեղ ղեկավարությունը կարծես ամեն ինչ չափում է ասֆալտի քանակով, ցավալի է տեսնել, որ հենց քաղաքի սրտում՝ տուրիստներով լի հատվածում, ճանապարհը մնացել է այսպիսի անմխիթար վիճակում: Սա այն վայրն է, որտեղ առաջին տպավորությունն է ձեւավորվում, բայց փոխարենը ստեղծվում է անտարբերության ու անպատասխանատվության պատկեր: Միգուցե ժամանակն է ոչ միայն խոսել բարեկարգումից, այլեւ իրականում տեսանելի դարձնել այն հենց այնտեղ, որտեղ ամենաշատն է պետք»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

ՄՈՏ 10 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԲԱԺՆԱՅԻՆ ԳՈՒՅՔ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ, վիճակագրության պետական խորհրդի անդամ Անահիտ Սաֆյանի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ:

Նշենք, որ Անահիտ Սաֆյանը Վիճակագրության պետական խորհրդի անդամի պաշտոնը զբաղեցնում է 2019 թվականի նոյեմբերի 19-ից: Ներկայումս նա նաեւ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալն է:

Ըստ հայտարարագրի՝ Սաֆյանը մի շարք անշարժ գույքերի համասեփականատեր է: Մասնավորապես, նա Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Գետամեջ բնակավայրում ունի այգետնակ (ամառանոց) եւ հողամաս՝ երկուսն էլ 1/2 բաժնային սեփականությամբ, որոնք ստացել է ժառանգության կարգով 2019 թվականի հոկտեմբերի 10-ին: Բացի այդ, նա Երեւան քաղաքում ունի նաեւ բնակարան՝ բազմաբնակարան շենքում, որը նույնպես ձեռք է բերել ժառանգությամբ՝ 1/2 բաժնային սեփականությամբ (2019թ. սեպտեմբերի 9):

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց նաեւ, որ հայտարարատու պաշտոնյան բանկային հաշիվներում ունեցել է 2 մլն 945 հազար 715 դրամ եւ 5 մլն 158 հազար 248 դրամ, ինչպես նաեւ 2,041.94 ԱՄՆ դոլար մնացորդ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 100 հազար դրամ: Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա հաշվետու տարվա ընթացքում Անահիտ Սաֆյանը ստացել է 831 հազար 18 դրամ կենսաթոշակ՝ Սոցիալական ապահովության ծառայությունից: Բացի այդ, նրա հիմնական եկամուտը ձեւավորվել է աշխատավարձից, որը կազմել է 8 մլն 996 հազար 643 դրամ՝ ՀՀ վիճակագրական կոմիտեից: Այսպիսով, 2024 թվականի ընթացքում Անահիտ Սաֆյանի ընդհանուր եկամուտը կազմել է 9 մլն 827 հազար 661 դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ՑՈՒՅՑԻ

Դոնի Ռոստովում բազմամարդ հավաք է տեղի ունեցել՝ ի պաշտպանություն Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի: Ինչպես հայտնում է «Վզգլյադ»-ը, միջոցառմանը մասնակցել է շուրջ 1500 մարդ:

Սուրբ Խաչ եկեղեցու վանահայր Տեր Հարություն քահանա Տերտերյանը նշել է, որ հայ համայնքի ներկայացուցիչներն ուշադրությամբ հետեւում են Հայաստանում տեղի ունեցող զարգացումներին՝ ներկա իրավիճակը բնորոշելով որպես ճնշում եկեղեցական կառույցների նկատմամբ: Նա ընդգծել է, որ ստեղծված պայմաններում ՀԱԵ հոգեւորականության համար չափազանց կարեւոր է զորակցություն հայտնել հավատացյալներին: «Կարելի է վստահորեն ասել, որ Հայ առաքելական եկեղեցուն ուղղված աջակցության հանրահավաքը հաջողված էր: Նշանակալի է նաեւ, որ այն տեղի է ունեցել Ծաղկազարդի օրը»,- նշել է Տեր Հարությունը:

Հոգեւորականը նաեւ հիշեցրել է Հայաստանում 4 արքեպիսկոպոսների ձերբակալության մասին: «Այն, ինչ կատարվում է Հայաստանում, որտեղ 4 արքեպիսկոպոսներ են ձերբակալվել, հնարավոր չէ այլ կերպ անվանել, քան իշխանությունների կողմից ճնշում»,-հայտարարել է նա: Տերտերյանն առանձնահատուկ ընդգծել է, որ միջոցառումն անցել է առանց քաղաքական կարգախոսների: Միեւնույն ժամանակ նա նշել է, որ ծխականների համար կարեւոր էր հասցնել հոգեւորականության դիրքորոշումը եւ ցուցադրել աջակցությունը:

«Յուրաքանչյուր ելույթ ունեցող իր աջակցությունն է հայտնել Հայաստանի շարքային քաղաքացիներին եւ Հայ առաքելական եկեղեցու բոլոր հետեւորդներին»,-հավելել է նա: Կազմակերպիչները ակցիայի մասնակիցների թիվը գնահատել են առնվազն 1,5 հազար մարդ:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿԿՆՔԵ՞Ն

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանի ղեկավարությունը պատրաստ է կատարել ԱՄՆ պահանջների մեծ մասը:

«Նրանք մեզ հետ զիջումների են գնացել կետերի մեծ մասում: Ինչո՞ւ չգնան», - ասել է նա լրագրողներին իր ինքնաթիռում՝ Ֆլորիդա նահանգի Ուեսթ Փալմ Բիչից Վաշինգտոն թռչելիս, պատասխանելով այն հարցին, թե արդյոք ԱՄՆ-ը Իրանին ուղարկել է հակամարտությունը դադարեցնելու 15 կետանոց ծրագիր:

«Նրանք համաձայն են մեր ծրագրի հետ: Այսինքն՝ մենք նրանցից 15 բան խնդրեցինք», -հավելել է ամերիկացի առաջնորդը: Նա վստահեցրել է, որ Թեհրանը «մեծ մասամբ» համաձայնել է կատարել այդ պահանջները:

«Կարծում եմ՝ մենք նրանց հետ համաձայնագիր կկնքենք, ես բավականին վստահ եմ դրանում: Բայց լիովին հնարավոր է, որ մենք դա չանենք», - նշել է նա:

ԱՆՑԵԼ Է ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Հայ-ամերիկյան համալսարանը հայտնում է. «Խնդրում ենք ի գիտություն ընդունել, որ ելնելով անվտանգության նկատառումներից եւ հաշվի առնելով Արեւմտյան Ասիայի ու Մերձավոր Արեւելքի ամերիկյան համալսարանների թիրախավորման վերաբերյալ Իրանի կողմից հնչեցված սպառնալիքները, երկուշաբթի՝ մարտի 30-ին, բոլոր դասերը կանցկացվեն առցանց ձեւաչափով: Նշենք, որ սա պարզապես նախազգուշական միջոցառում է: Համալսարանը ուշադիր հետեւում է իրավիճակին եւ կտեղեկացնի ժամանակացույցի կամ ուսուցման ձեւաչափի ցանկացած փոփոխության մասին:

Ցանկանում ենք ընդգծել, որ մեր համալսարանի նկատմամբ որեւէ ուղղակի սպառնալիք չի արձանագրվել, եւ առկա չեն հիմքեր համալսարանի՝ վտանգի մեջ գտնվելու վերաբերյալ, ուստի խուճապի պատճառ չկա:

Հարգելի՛ ՀԱՀ համայնքի անդամներ, խնդրում ենք պարբերաբար ստուգել ձեր էլեկտրոնային փոստերը եւ վերջին թարմացումների համար հիմնվել բացառապես համալսարանի պաշտոնական հաղորդագրությունների վրա»:

● *Անցած 1 օրում գրանցվել է 6 ավտովթար. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

FINTECH360

ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ 500 ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

Ապրիլի 27-ից 29-ը Երեւանում կայանալիք FINTECH360 միջազգային համաժողովին կմասնակցեն ավելի քան 500 մասնագետներ 30 երկրներից: Միջոցառմանը կմասնակցեն բանկերի, դրամական փոխանցումների ընկերությունների, վճարային համակարգերի, տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների եւ ստարտափների ղեկավարներ: Համաժողովը կկենտրոնանա ֆինանսական տեխնոլոգիաների հիմնական միտումների եւ զարգացումների, ինչպես նաեւ ոլորտի ապագան ձեւավորող նոր հնարավորությունների եւ նորարարական մոտեցումների ուսումնասիրության վրա:

FINTECH360 ծրագիրը ներառում է հետեւյալ պանելային քննարկումները՝

- Ֆինանսական ծառայությունների թվային վերափոխում
- Արհեստական բանականության կիրառումը բանկային ոլորտում
- Կենսաչափական եւ թվային նույնականացում
- Էլեկտրոնային առեւտուր
- Տվյալների պաշտպանություն
- Իրական ակտիվների տոկենիզացիա
- Կրիպտոարժույթներ եւ բլոկչեյն տեխնոլոգիա

Համաժողովի հիմնական խոսնակներն են՝

- Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը
- MCC ICF Սաբրինա Մոմինը
- Յունիբանկի Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը
- Marchmont Capital Partners-ի հիմնադիր Քենդրիկ Դ. Ուայթը
- ՀՀ Կենտրոնական բանկի Ֆինանսական համակարգի զարգացման կենտրոնի ղեկավար Աշոտ Պետրոսյանը
- KWIKPAY վճարային համակարգի նախագահ Շալվա Մելաձե
- Webster University Geneva Campus-ի պրոֆեսոր Ռուբեն Ինջիկյանը
- Over Ventures-ի խորհրդատու Լեոնարդ Բուրգերը
- ֆինանսական պրոդուկտների գծով Վերաքննիչ դատարանի փորձագետ Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտը
- Միջազգային թվային տնտեսությունների ասոցիացիայի հիմնադիր Մարիա Սելտենը

Համաժողովը տեղի կունենա Seven Visions Resort &-ում Places, The Dvin հյուրանոցում՝ Յունիբանկի, UBPay հայաստանյան դրամական փոխանցումների համակարգի, KWIKPAY վճարային համակարգի եւ Ns.Cards ընկերության աջակցությամբ:

Ծրագրի շրջանակներում համաժողովի մասնակիցներին կներկայացվի նաեւ Հայաստանի մշակութային ժառանգությունը: Նրանք կայցելեն նաեւ Գառնի եւ Գեղարդ, ինչպես նաեւ կհյուրընկալվեն The Van Ardi Winery-ում:

Մինչեւ մարտի 31-ը մասնակցության բոլոր փաթեթների համար գործում է 15% զեղչ: *(Գ)*

ԱԿԲԱ

AI ԳՈՐԾԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆՆ ՈՒՂՂԵԼ Է 45 ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

Հայաստանում արհեստական բանականության ենթակառուցվածքների զարգացումը խթանելու նպատակով Ակբա բանկն ու Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթն ընդհանուր 45 միլիոն ԱՄՆ դոլար են ուղղել Firebird ընկերությանը՝ արհեստական բանականության գործարանի եւ տվյալների կենտրոնի ստեղծման համար:

«Այս նախագծի իրականացումը հսկայական նշանակություն եւ ազդեցություն է ունենալու Հայաստանի համար: Այն մեր երկրի առջեւ նոր հորիզոններ է բացելու. տեխնոլոգիաների առումով Հայաստանը ոչ միայն տարածաշրջանային, այլեւ համաշխարհային քարտեզի վրա սկսելու է կարեւոր դեր խաղալ: Մենք այս նախագծի իրականացմանը մասնակցեցինք Ամունդի-Ակբայի հետ համատեղ: Ամունդի-Ակբան ֆինանսական աջակցությունից բացի իրականացրել է նաեւ այս ամբողջ նախագծի վերլուծությունը»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«ԱՄՆ-Հայաստան հարաբերությունները՝ հատկապես տեխնոլոգիաների ոլորտում, շատ ամուր են եւ շարունակաբար զարգանում են: Մենք մուտք ենք գործում նոր փուլ, որտեղ կտեսնենք նոր ներդրումներ եւ գործընկերությունների աճ: Սա լավ օրինակ է այն բանի, թե ինչ կարող է ստացվել, երբ ամերիկյան տեխնոլոգիան համադրվում է Հայաստանի բարձրակարգ տեխնոլոգիական ներուժի, գիտելիքի եւ մարդկային ռեսուրսների հետ: Այս համադրությունը ոչ միայն կօգնի Հայաստանին դառնալ տեխնոլոգիական առաջատար եւ խթանել երկրի տնտեսությունը, այլեւ կնպաստի աշխատատեղերի ստեղծմանն ու տնտեսական աճին»,- նշել է Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը:

«Այս նախագծի շրջանակում ստացված միջազգային թույլտվությունը ներառում է առաջատար կիսահաղորդչային տեխնոլոգիաներ, որոնք, ինչպես ընդգծել է ԱՄՆ փոխնախագահ Վենսը, հասանելի չեն աշխարհի երկրների մեծամասնությանը: Փաստը, որ Հայաստանը ստացել է նման բացառիկ թույլտվություն, վկայում է Միացյալ Նահանգների հետ մեր գործընկերության ամրության մասին, ինչպես նաեւ արտացոլում է այն համատեղ ռազմավարական տեսլականը, որի հիմքում Հայաստանի՝ որպես առաջադեմ տեխնոլոգիաների եւ գլոբալ նորարարության առանցքային կենտրոնի ձեւավորումն է»,- նշել է ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

«Սա նախ եւ առաջ ուղիղ ներդրում է Հայաստանի տեխնոլոգիաների, գիտության եւ տնտեսության զարգացման մեջ: Ուրախ եմ, որ այսօրինակ ծրագրերն արդեն Հայաստանում միայն երազանքների մակարդակի չեն: Սա իրականություն է, որի շուրջ կա շատ գեղեցիկ եւ շատ որակյալ կոնսոլիդացիա»,- նշել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը:

«Ուրախ եմ, որ մեր ֆինանսական կառույցները նույնպես միացել են այս նախագծին: Ծավալուն աշխատանք կատարելուց հետո ունենք ֆինանսական կառույցների վստահությունը եւ միասին կարողացանք 300 միլիոն դոլարի գործարք կնքել, որը, կարծում եմ, թե իր մեծությամբ, թե կարեւորությամբ Հայաստանի պատմության մեծ գործարքներից մեկն է, եթե ոչ ամենամեծը»,- նշել է Firebird AI ընկերության գլխավոր տնօրեն Ալեքսանդր Եսայանը:

Նախագծի իրականացման համար Ակբա բանկն ուղղել է 25 մլն ԱՄՆ դոլար, իսկ Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը՝ 20 մլն ԱՄՆ դոլար:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

5% ԿԱՆԽԱՎՃԱՐ՝ ԷԼԵԿՏՐԱՄՈԲԻԼ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի լիզինգային շուկայի բացառիկ առաջատար Ակբա Լիզինգը TOON EXPO 2026-ի շրջանակում իր գործընկեր ROEL Automotive Group-ի հետ համատեղ ներկայացնում է էլեկտրամոբիլներ ձեռք բերելու հատուկ առաջարկ:

Մինչեւ մարտի 29-ը ներառյալ՝ TOON EXPO 2026-ի շրջանակում, Ակբա Լիզինգի ֆինանսավորմամբ հնարավոր կլինի ձեռք բերել Li AUTO, Tank եւ Poer բրենդների էլեկտրամոբիլներ՝ սկսած 5% կանխավճարից, ՀՀ դրամի դեպքում մինչեւ 14.3% տարեկան փաստացի տոկոսադրույքով՝ներառյալ նաեւ Կասկո ապահովագրությունը:

«Վերջին տարիներին էլեկտրամոբիլների նկատմամբ հետաքրքրությունն աճում է, եւ այս առումով Ակբա Լիզինգը զարգացնում է իր ֆինանսավորման պայմանները, որպեսզի թե՛ ֆիզիկական անձինք, թե՛ բիզնեսները կարողանան օգտվել էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցներից: ROEL Automotive Group-ի հետ համագործակցության արդյունքում մեր հաճախորդները հնարավորություն ունեն ձեռք բերելու մեքենաներ՝ կանխավճարը սկսած 5%-ից»,- նշել է Ակբա Լիզինգի մատակարարների հետ համագործակցության բաժնի ղեկավար Վահագն Շմավոնյանը:

«ROEL Automotive Group-ը TOON EXPO-ի շրջանակում Tank, Poer եւ Li AUTO մոդելային շարքի համար առաջարկում է հատուկ 5% գնիջեցում, ինչպես նաեւ մեր ֆինանսական գործընկեր Ակբա Լիզինգի հետ ունենք ֆինանսավորման հատուկ պայմաններ: Առաջարկը գործելու է այս 3 օրերի ընթացքում, ինչը հիանալի տարբերակ է մեքենա ձեռք բերելու համար»,- նշել է ROEL Automotive Group -ի մարքեթինգի ղեկավար Ավետիք Սիմոնյանը:

Միայն Toon Expo 2026-ի շրջանակում հատուկ առաջարկով է ներկայանում նաեւ Ակբա Լիզինգի գործընկեր Sino Armenia-ն: Ընկերությունից HOWO եւ SDLG բրենդների շինարարական տեխնիկա եւ սարքավորումները հնարավոր է ձեռք բերել Ակբա Լիզինգի աջակցությամբ՝ ֆինանսավորման լավագույն պայմաններով:

TOON EXPO 2026-ը բաց է մինչեւ մարտի 29-ը ներառյալ:

Ակբա Լիզինգի 100% բաժնետերը Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԽԱԶԵՐ»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

«Խազեր» հայկական երաժշտական երկրորդ մրցանակաբաշխությունը, որն անցկացվեց ապրիլի 29-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, մեկ հարկի տակ էր համախմբել երաժշտական տարբեր ժանրերում ստեղծագործող արտիստների, ոլորտի ներկայացուցիչների:

Armenpress-ի թղթակցի հաղորդմամբ՝ միջոցառմանը Հայկական ազգային երաժշտական ակադեմիան մրցանակներ հանձնեց 18 անվանակարգում ներկայացված արտիստների եւ նախագծերի:

Մրցանակաբաշխությանը ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը «Խազեր»-ի հատուկ մրցանակը հանձնեց Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, ՀՀ ազգային հերոս, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանին:

Դանիելյանն ընդգծեց, որ մեր երկրում շատ են երախտավորները, որոնք կերտել են Հայաստանիմ շակույթն ու այժմ մեր կողքին են, որոնց անմնացորդ շնորհակալ են, իսկ Հովհաննես Չեքիջյանը դարի մարդ է: «Խոսքերով հնարավոր չէ նկարագրել այն ամենը, ինչ նա արել է իր ամբողջ կյանքում: Նրա կյանքը նվիրված է եղել հնչյունին ու երգին: Նա ստեղծել է մշակույթ, ձեւավորել է մտածողություն եւ սերունդներին տվել է ստեղծագործելու մի նոր չափանիշ: Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը վաղուց դարձել է արժեքային մի ամբողջ համակարգ: Հավանաբար նրա փոքրիկ գաղտնիքն է, որ մարդկանց կարողանում է համախմբել մեկ շնչի մեջ, կարողանում է ստեղծել ներդաշնակություն եւ գերել սրտերը, հուզել, ապրեցնել»,- ասաց փոխնախարարը:

Դանիելյանի խոսքով՝ Չեքիջյանի անունը վաղուց անցել է ժամանակների սահմանները, իսկ ստեղծածը շարունակում է ապրել, հնչել հնչյուն առ հնչյուն:

«Լավագույն դասական երգիչ» անվանակարգում մրցանակը տրվեց Արսեն Սողոմոնյանին:

«Լավագույն դասական երգչուհի» ճանաչվեց Ջուլիանա Գրիգորյանը, որն օրերս Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի «Պայացներ» օպերայի առաջնախաղում հանդես եկավ Նեդդայի կերպարում:

«Լավագույն դասական նախագիծ» համարվեց «Սիմֆոնիկ Հայկո. բաց երկնքի տակ» պրոյեկտը:

«Լավագույն երաժշտական նախագիծ եւ բեմադրություն» համարվեց «Սասունցի Դավիթ» բալետ-օրատորիան:

«Լավագույն փոփ երգչուհի» ճանաչվեց Իվետա Մուկուչյանը:

«Լավագույն փոփ երգիչ» անվանակարգում հաղթեց Արամ MP3-ն: Երգիչն ասաց, որ մրցանակը պարտավորեցնող է եւ շնորհակալություն հայտնեց բոլորին:

«Լավագույն երգ» ճանաչվեց Սոնա Ռուբենյանի «Ճանապարհեցիր ինձ տուն» ստեղծագործությունը:

«Լավագույն ալբոմ» համարվեց Բրյուսելի Love Reversed-ը:

«Լավագույն տեսահոլովակ» անվանակարգում մրցանակը տրվեց Սոնա Ռուբենյանի «Վարդավառը գալիս է» հոլովակին, որի ռեժիսորը Արթուր Մանուկյանն է:

«Տարվա հայտնություն» դարձավ Սիմոնը, որն այս տարի Հայաստանը կներկայացնի «Եվրատեսիլ» երգի մրցույթում: Նա շնորհակալություն հայտնեց այն մարդկանց, որոնք հավատացել են իրեն եւ իր զույգ տղաներին՝ շեշտելով, որ նրանց աչքերին նայելով՝ ցանկանում է ավելի մեծ բարձունքների հասնել եւ իր հաղթանակները նվիրել նրանց: Սիմոնն ընդգծեց, որ «Խազեր»-ը իր առաջին մրցանակն է:

«Լավագույն հեղինակ-կատարող» անվանակարգում հաղթեց Սոնա Ումրոյանը:

«Լավագույն հիփ հոփ եւ R&B արտիստ կամ խումբ» անվանակարգում մրցանակը տրվեց Միշոյին:

«Լավագույն ջազ արտիստ կամ խումբ» անվանակարգում հաղթեց Խաչիկ Սահակյանը:

«Լավագույն ռոք արտիստ կամ խումբ» համարվեց «Նեմրա»-ն: Խումբն այդ մրցանակին էր արժանացել նաեւ նախորդ տարի: Խմբի անդամներից Վանը շեշտեց, որ մրցանակն իրականում իրենց երկրպագուներինն է՝ նեմրացիներինը:

«Լավագույն ազգային/ժողովրդական արտիստ կամ խումբ» համարվեց Կարեն եւ Սեւակ բենդը:

«Լավագույն արտիստ քաղաքային ֆոլկ» անվանակարգում մրցանակը տրվեց Տաթեւ Ասատրյանին:

«Լավագույն գործիքավորում (ոչ դասական)» անվանակարգում մրցանակը տրվեց Karen SevakProduction-ին՝ Սիրուշոյի «Սիրտ» երգի գործիքավորման համար:

«Լավագույն կոմպոզիտոր» անվանակարգում հաղթեց Մարտին Ուլիխանյանը:

Հաղթողներին տրվեց «Խազ» յուրատեսակ մրցանակը, որի հեղինակը քանդակագործ, նկարիչ Արման Նուռն է:

Մրցանակաբաշխության ռեժիսորներն էին Հրաչ Քեշիշյանը, Նաիրե Ստեփանյանը եւ Արթուր Մանուկյանը: «Խազեր»-ն անցկացվեց միջազգային մրցանակաբաշխությունների ձեւաչափով: Միջոցառումը մեկնարկեց կարմիր գորգի հանդիսավոր արարողությամբ, որին մասնակցեցին երաժշտական ոլորտի առաջատարները:

Մրցանակաբաշխությունն իրականացրեց Հայկական ազգային երաժշտական ակադեմիան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄՐՑԵԼՈՒ Է

Արման Ծառուկյանն իր հաջորդ մենամարտն անցկացնելու է ապրիլի 8-ին Սան Պաուլու քաղաքում:

HYPE FC մրցաշարի շրջանակներում նա գրեփլինգի կանոններով մրցելու է հայկական արմատներով Դիլոն Դենիսի հետ: Նրանք պայքարելու են լիգայի չեմպիոնական գոտու համար, որը Ռիո դե Ժանեյրոյում կայացած մենամարտում Ծառուկյանը նվաճել է Մոհամեդ Մոկաեւի հետ դիմակայությունում:

Օրեր առաջ Արման Ծառուկյանը Ֆլորիդայում RAF 07 մրցաշարի շրջանակներում կայացած ազատ ոճի ըմբշամարտի ռեւանշ մենամարտում կրկին հաղթել է Ջորջիո Պուլասին: Դենիսը եւս ելույթ է ունեցել եւ զիջել Կոլբի Քովինգթոնին:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը տարվա մեկնարկն ազդարարեց հանրապետական ստադիոնում Բելառուսի հետ ընկերական խաղում կրած պարտությամբ: Մինչ հանդիպման մեկնարկը Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը թիմի ավագ Էդուարդ Սպերցյանին հանձնեց 2025 թվականի «Լավագույն ֆուտբոլիստի» մրցանակը:

Երկրպագուներն այս անգամ էլ իրենց դժգոհությունն արտահայտեցին «Ամեն ինչից շատ, ամեն ինչից վեր սիրում է կյանքում նա իր աթոռը» եւ «Հեռացեք, ֆուտբոլ ունենանք» պաստառներով: Մելիքյանի համար հանդիպումը փորձարկումների հիանալի առիթ էր, ու նա մի քանի նորեկների տեսավ խաղադաշտում: Հավաքականում իր նորամուտը նշեց Ջունիոր Բուենոն: Խաղը սկսվեց հյուրերի բուռն գրոհներով, որն էլ 8-րդ րոպեին տվեց իր արդյունքը: Բելառուսի ավագ Եվգենի Յաբլոնսկին գրավեց Հենրի Ավագյանի դարպասը: Գոլից հետո մրցակիցը մի քանի գրոհ էլ ունեցավ, բայց ոչ այդքան վտանգավոր: Հայաստանի հավաքականը հարձակման գծում բավական սուր չէր ու առաջին խաղակեսում չկարողացավ խփել պատասխան գնդակը: Ընդմիջումից հետո հայ ֆուտբոլիստներն ավելի ակտիվ մտան խաղի մեջ ու հաջորդաբար մի քանի գրոհ կազմակերպեցին: Ամենավտանգավորը տուգանայինից հարվածեց Վահան Բիչախչյանը, եւ Բելառուսին փրկեց դարպասապահ Պավել Պավլյուչենկոն:

Հայաստանի հաջորդ վտանգավոր պահը Ֆին Գերագուսյանի մասնակցությամբ էր, նա փոխարինման մտավ ու կարող էր գոլի հեղինակ դառնալ: Փոխարենը Բելառուսը կրկնապատկեց հաշիվը, 72-րդ րոպեին աչքի ընկավ Գերման Բարկովսկին: Հայերն անմիջապես նետվեցին գրոհի, եւ Վահան Բիչախչյանի հեռահար հարվածից հետո գնդակը դիպավ դարպասաձողին, տուգանայինից էլ լավ հարված կատարեց Արթուր Սերոբյանը, բայց նորից նպատակին հասնել չկարողացավ: Խաղավարտին բելառուսները տուգանայինում խախտեցին կանոններն, ու Վահան Բիչախչյանը դիպուկ իրացրեց 11-մետրանոցը՝ 1:2: Հայաստանի հավաքականը մյուս ընկերական հանդիպումներն անցկացնելու է հունիսին: Հունիսի 6-ին Եղիշե Մելիքյանի թիմը կընդունի Ղազախստանին, իսկ հունիսի 9-ին՝ Մոլդովային:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԲԱՑՎԵԼ Է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Իսպանիայի ազգային գրադարանում բացվել է «Հոգեւոր քարտեզի արահետներով. հայկական ձեռագրական արվեստը» խորագրով ցուցահանդեսը, որը կյանքի է կոչվել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի՝ նշյալ գրադարան կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակում:

Ցուցադրության հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես են եկել Իսպանիայի մշակույթի գծով պետական քարտուղար Ջորջի Մարթի Գրաուն, գրադարանի տնօրեն Օսկար Արոյո Օրտեգան, Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, Իսպանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Սոս Ավետիսյանը:

Բացման արարողությանը ներկա են եղել Իսպանիայի մշակութային գործիչներ, պաշտոնատար անձինք, գործարարներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, որոնց համար կազմակերպվել է առանձին շրջայց:

Համատեղ ցուցադրությանը ներկայացվել են Մատենադարանում պահվող կարեւորագույն հայկական ձեռագրերի ընտրանուց շուրջ մեկուկես տասնյակ թանգարանային առարկաներ, որոնց մի մասն առաջին անգամ է ցուցադրվում Հայաստանից դուրս:

Նախաձեռնությունը դիտարկվում է որպես մշակութային դիվանագիտության արդյունավետ գործիք՝ ամրապնդելով ՀՀ դիրքերը համաշխարհային մշակութային ժառանգության պահպանման եւ հանրահռչակման ոլորտում:

Ցուցադրության համադրողն է Իվեթ Թաջարյանը: Այն կգործի մինչեւ 2026թ.-ի հունիսի 21-ը:

● Ապրիլի 7-ին՝ ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա «Սասունցի Դավիթ» բալետ-օրատորիան:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Իմ ֆեյսբուքյան էջը կոտրել են եւ սկսել են տարբեր գրառումներ կատարել իմ մասին:

Արշալույս Սիմոնյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ քրեական օրենսգրքի 251-257-րդ հոդվածներով սահմանված են համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված քրեական հանցագործությունների տեսակները, որոնցից է նաեւ համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը: Մասնավորապես, համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող եւ օրենքով պահպանվող տեղեկատվության համակարգի որեւէ մաս կամ ամբողջությամբ համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), որը կատարվել է պաշտպանիչ համակարգի խախտմամբ եւ անզգուշությամբ առաջացրել է տեղեկատվության փոփոխություն, պատճենահանում, ոչնչացում կամ ուղեփակում (մեկուսացում) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ ցանցի, կամ համակարգչային սարքավորումների շարքից դուրս բերում կամ այլ զգալի վնաս՝ պատժվում է տուգանքով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Եթե Ձեր ֆեյսբուքյան էջը կոտրել են այլ անձինք եւ առանց ձեր թույլտվության՝ ապօրինի, մուտք են գործել այն, փոխել են գաղտնաբառը, ապա դա արդեն իսկ նշանակում է, որ անհայտ անձինք կատարել են հանցավոր արարքներ եւ արդյունքում տիրացել են համակարգչային ցանցում պահով եւ Ձեր կողմից գաղտնաբառով պաշտպանված տեղեկատվությանը: Կատարվածը կանխելու եւ հանցագործություն կատարած անձանց բացահայտելու համար պետք է դիմել ոստիկանություն՝ մանրամասն ներկայացնելով կատարվածը, հայտնելով, թե երբ են կոտրել ձեր ֆեյսբուքյան էջը, եւ ում եք կասկածում, եթե այդպիսիք կան: Հանցագործության մասին հաղորդման կազմման ձեւը կարող եք ներբեռնել մեր կայքում հրապարակված մեկ այլ հրապարակումից, որտեղ կարող եք ծանոթանալ, թե ուր պետք է այն ներկայացվի: Հարկ է իմանալ, որ վերոնշյալ հանցագործության դեպքի առթիվ քրեական գործ հարուցվելուց հետո իրականացված միջոցառումների արդյունքում բացահայտվելու է Ձեր ֆեյսբուքյան էջը կոտրած անձի ինքնությունը եւ նրան առաջադրվելու է մեղադրանք, եւ հետագայում, որքան էլ որ ցանկանաք Ձեր՝ որպես տուժողի, բողոքը հետ վերցնել, ապա բողոքը հետ վերցնելու հիմքով քրեական գործը չի կարճվի, քանի որ այդ հանցագործության դեպքում մեղադրանքը հանրային է, այսինքն՝ անկախ Ձեր կողմից բողոք ներկայացնելուց՝ պետությունն է մեղադրանք առաջադրելու այդ անձանց:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուստի, եթե կան կասկածներ, որ Ձեր ֆեյսբուքյան էջի կոտրվելը զուտ չար կատակ է կամ կատարվել է Ձեր մտերիմ անձանց կողմից, ապա պետք է մինչ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելը խորը մտածել այդ մասին եւ նոր որոշում կայացնել հաղորդում ներկայացնելու մասին:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ոստիկանության կողմից վաս վերաբերմունքի եմ արժանացել: Ի՞նչ կարող եմ անել:

Սերինե Հովհաննիսյան, 35 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ոստիկանության կողմից ենթարկվել եք վատ վերաբերմունքի, ապա Դուք կարող եք Ձեր բոլոր բողոքները ներկայացնել ոստիկանության պետի անունով կամ զանգահարել ոստիկանության ներքին անվտանգության վարչության թեժ գիծ, կամ ներկայացնել Ձեր բողոքը գրավոր դիմումի տեսքով ոստիկանության պետի անունով: Կարող եք նաեւ Ձեր բողոքները ներկայացնել էլեկտրոնային կարգով: Եթե կարծում եք, որ ոստիկանության ծառայողի կողմից կատարվել է հանցագործություն, ապա այս դեպքերում կարող եք ահազանգել ՀՀ հատուկ քննչական ծառայություն հեռախոսահամարով կամ հաղորդում ներկայացնել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Ոստիկանի կողմից կատարվող ապօրինի գործողությունները հետագայում հիմնավորելու եւ դրանով հանդերձ Ձեր իրավունքները պաշտպանելու համար նպատակահարմար է ճշտել ոստիկանի անունը, ազգանունը, պաշտոնը եւ կոչումը, այն բաժինը, որտեղ աշխատում է, իսկ հնարավորության դեպքում՝ տեսանկարահանեք կամ լուսանկարահանեք տեղի ունեցող իրադարձությունները, որի իրավունքը Դուք ունեք: Ոստիկանը հանդիսանում է հանրային իշխանություն կրող անձ եւ իրականացնում է օրենքով իր վրա դրված լիազորություններն ու պարտականությունները, եւ Դուք՝ որպես քաղաքացի, իրավասու եք տեսանկարահանել այն ամբողջ գործընթացը, որը վերաբերում է Ձեր հանդեպ ոստիկանի գործողություններին: Միեւնույն ժամանակ, Դուք իրավունք ունեք չպատասխանել ոստիկանի որեւէ հարցին՝ պահանջելով Ձեր փաստաբանի ներկայությունը, իրավունք ունեք հրաժարվելու առանց փաստաբանի ներկայության որեւէ բացատրություն տալուց:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որպես արագ արձագանքման միջոց՝ ոստիկանության ծառայողի ապօրինի գործողությունների դեմ արդյունավետ է անմիջապես ահազանգել նաեւ Մարու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գիծ՝ 116 հեռախոսահամարով, հայտնել Ձեր գտնվելու վայրը եւ մյուս մանրամասն տեղեկությունները, ինչպես նաեւ Ձեր բոլոր բողոքներն ու առարկությունները ոստիկանի վարքագծի մասին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի Ջուղայի, Լվովյան եւ Նանսենի փողոցներում փոսերի մի հատված վերածվել է լճակների:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 + 6 + 11
Կոտայքի լեռներ	- 2 + 1 + 6 + 10
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 5 +10 + 12
Գեղարքունիք	0 - 4 + 4 + 8
Լոռի	+ 2 + 5 + 9 + 13
Տավուշ	+ 2 + 6 +10 + 13
Արագածոտնի լեռներ	- 2 + 3 + 5 + 8
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 + 9 + 13

Արարատ	+ 4 + 7 +11 + 14
Արմավիր	+ 5 + 8 +14 + 16
Վայոց ձորի լեռներ	- 2 + 2 + 3 + 7
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 8 + 12 + 15
Սյունիքի լեռներ	0 - 2 + 5 + 8
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +11 + 14
Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 +15 + 18
Երեւան	+ 5 + 7 +13 +15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*